ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՈՒՄԱՆԻԶԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՏՈՒՄԸ

Ռոբերտ Ներսեսի Սարինյան
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի
գլխավոր գիտաշխատող, բաժնի վարիչ
տ.գ.դ., պրոֆեսոր

XX դարասկիզբը հասարակության տնտեսական ու սոցիալական զարգացման նոր որոնումների ժամանակաշրջան էր: Հասարակական հայեցության առաջ ծառանում են բազմաթիվ նոր անհայտներ, նոր պատրանքներ, կապված XX դարի հետ, ակնկալվում նոր սպասումներ հասարակության կնճռոտ հարցերի լուծման ասպարեզում: «Տանջված մարդկության համար վերջին տասնիններորդ դարը,- գրում է «Մշակը»,- նշանավոր է նրանով, որ նա բացեց ապագա ուրախությունների մեծ հեռանկարներ: Իրականությունը դեռ քիչ է փոխված, բայց նա մոտեցրած էր մի շավիղի, որ տանում է դեպի երազների և ոսկե հույսերի իրագործությունը: Առաջիկա քսաներորդ դարը, որի մեջ մտնում ենք այսօր, պետք է պատասխան տա մեր հասարակական հարցերին և լուծի մի շարք գորդյան հանգույցներ»[1]: Սակայն հասարակական նորոգման «Մշակի» հայեցողությունը նոր բան չէր ենթադրում: Ու թեև «իդեալական հասարակարգի» գաղափարը համարվում էր անիրագործելի և ինչ-որ տեղ նույնիսկ անընդունելի, այնուամենայնիվ, աստիճանական կատարելագործությունն այն միակ ուղին էր, իսկ XX դարը հասարակության պատմության այն պատվանդաններից մեկը, որի «ընթացքում և իր ճանապարհին պիտի բարձրանա մի նոր, ավելի բարձր գագաթի վրա, որից ավելի պայծառ երևա իդեալի ուղեցույց լույսը»[2]:

Եվ ահա թերթի մի այլ տեսաբան մտորում է հասարակական առաջընթացի, քաղաքակրթության ու գիտության առաջադրած, բայց, նրա կարծիքով, ըստ էության՝ անպատասխան մնացած հարցերի վերաբերյալ. «գիտությունը և փիլիսոփայությունը, չնայած իրենց հրաշալի ընդհանրացումներին, անկարող եղան պատասխանել մետաֆիզիկայի դրած հարցերին՝ ինչ է տիեզերքը, նրա պատճառը, նրա նպատակը… ուր է տանում պրոգրեսը, ուր է արդյոք այն «գերագույն երջանկությունը», որ այնքան խանդավառությամբ հռչակել են բարոյագետ փիլիսոփաները անհիշատակ ժամանակներից»[3]: Անցած պատմաշրջանների տնտեսական, փիլիսոփայական ու սոցիալական ուսմունքներից յուրաքանչյուրն առաջադրում էր իր համակարգը հասարակական ներհակությունների

[1] «Մշակ», Թիֆլիս, 1901, № 1:
[2] Տես նույն տեղում:
[3] Տես նույն տեղում, 1902, № 97:

լուծման ուղղությամբ։ Սակայն, դրանք բոլորն էլ ունեցել են միագիծ բովանդակություն և իրենց էությամբ հոռետեսական են «երջանկության առեղծվածի» հարցերում։ Նա քննադատում է Ժան Ժակ Ռուսոյի հասարակության «բնական վիճակի» վերաբերյալ տեսությունը, որի ժամանակ, իբր, մարդկանց միջև տիրել է համերաշխություն ու ներդաշնակություն, որ չնայած նրա «Հասարակական դաշինքի» հրատարակումից անցել է մեկ ու կես դար, սակայն ոչ միայն թուլացել է Թ.Հոբսի հռչակած «բոլորի պատերազմը բոլորի դեմ» սկզբունքը, այլև՝ «քաղաքական բռնակալությունը փոխարինվեց կապիտալի բռնակալությամբ։ Գոյության կռիվը ստացավ ավելի ուժ և տենդոտ կերպարանք»[1]։ Բարոյագիտությունն առաջադիմեց, միջին դարերի աստվածաբանությանը փոխարինեց Է.Կանտի ռացիոնալիզմը, «աստվածային սանկցիան տեղի տվեց մարդկային գերագույն ու անկախ բանականության սանկցիային», «մշակվեցին անթիվ անհամար կատեգորիաներ», որոնք նպատակ ունեին հասարակական հարաբերությունների բարոյական կատարելագործման միջոցով հաղթահարելու «սանձարձակ «ես»- պաշտամունքը»[2]։ Վերը նշված դիտողությունները համահունչ են XXI դարասկզբի համար։ Ն.Գոգոլի պատմվածքներից մեկում այսպիսի մի արտահայտություն կա. «փիլիսոփան, բոլոր չորս կողմերը ոտքերով փնտրելով, վերջապես կցկտուր ասաց՝ իսկ որտե՞ղ է ճանապարհը»։ Ամենատարբեր մասնագետները՝ փիլիսոփան ու տնտեսագետը, պատմաբանն ու քաղաքագետը, ֆիզիկոսն ու հոգեբանը, կենսաբանն ու մնացածները, ժամանակի ընթացքի մեջ կատարում են դիտողություններ՝ փորձելով ուրվագծել ներկա և ապագա զարգացումների ինչ-ինչ միտումներ։ Դրանք և՛ լավատեսական են, և՛ հոռետեսական, մի դեպքում կանխատեսում մոտալուտ կործանումը, մի երրորդ դեպքում՝ դրվատում գլոբալացման բերած բարեմասնությունները, աշխարհի համար գուշակում կայունություն և երկրների համերաշխություն, հասարակության ապագա հեռապատկերը կապում նրա հումանիզացման հետ և այլն։ Այս վերջին տեսանկյունն է արծարծում Հ.Մարզպանյանի «Տնտեսական զարգացման հումանիզացման պատմական միտումը» (տեսամեթոդական վերլուծություն) մենագրությունը։ Այն նպատակ ունի ցույց տալ, որ հասարակական առաջընթացի պատմական միտումը սոցիալ-տնտեսական հարաբերությունների հումանիստական ուղղվածությունն է, որի հիմքում դրված է այն գիտական վարկածը, համաձայն որի հումանիզմը տնտեսական հարաբերությունների խորքային էությունն է, իսկ այդ հարաբերությունների հումանիստական վերափոխումը՝ պատմական զարգացման օրինաչափությունը։

---

[1] Տես նույն տեղում։

[2] Տես նույն տեղում։

XX դարի վերջերին և XXI դարասկզբին է հատկացնում այն ժամանակը, երբ «հստակորեն ուրվագծվեց արտադրության տիրապետող՝ ինդուստրիալ համակարգի զարգացման բնական սահմանը», որը և պայմանավորեց սոցիալ-տնտեսական հարաբերությունների հումանիստական ուղղվածությունը: Ինչպես անցյալ դարասկզբին կարևորել է Մ.Վարանդյանը «Հասարակական զարգացման բազմադարյան հոսանքում, էգոիստական մղիչները հետզհետե նվազում են՝ տեղի տալով ալտրուիստական կամ այլասիրական մղիչների»: Ընդհանուր զարգացման մեջ նախորդ դարաշրջանների համեմատությամբ հումանիզմի սկզբունքը դառնում է ավելի շեշտված[1]: Թվում է արդի գլոբալացվող և ժողովրդավարացվող հասարակության բարդ, հակասական ու իրարամերժ պահվածքը դժվար է տեղադրել զուտ հումանիստական սկզբունքների քառակուսում, մինչդեռ հումանիզմը հարկ է դիտել իբրև «պատմականորեն զարգացման մեջ գտնվող երևույթի», կապված հասարակության արժեքային համակարգի կատարելագործման, նրա մշակութային վերափոխման մեջ: Իբրև որոշակի ձևավորված գաղափարական շարժում հումանիզմը կերպ է առել Վերածնության դարաշրջանում, սակայն հասարակության «հումանիզացման որպես պատմական գործընթացի էական կողմի, գիտական հիմքերը դրվել են մարքսիզմի դասականները», «հումանիզմի հոգևոր ժառանգությունը միավորելով տնտեսական և սոցիալական իրականության հետ»[2]: Չի կարելի Կ.Մարքսի ուսմունքում առաջադիմության շարժիչ ուժը հանգեցնել «հեղափոխական բռնի ուժի» գործոնին: Ավելին՝ Հ.Մարզպանյանը նշում է մարքսիզմի և լիբերալիզմի մեթոդաբանական սկզբունքի ընդհանրությունն ու նպատակները սահմանազատող տարբերությունը: Երկու տեսություններն էլ հետամուտ են անձնական շահերին: Առաջինում անհատն արգասիքն է հասարակական արտադրողական ուժի, որի մեջ ինտեգրված են հասարակական անհատները, ուստի նրանց անձնական շահը օրգանապես ներառվում է հասարակական շահի մեջ, հասարակական նպատակի իրացումը դառնում է նրանց հումանիստական ինքնիրացման անհրաժեշտ պայմանը: Երկրորդում՝ անհատներն առաջնորդվում են բացառապես առավելագույն օգտակարություն ստանալու նպատակով, իրենց հասարակական կապերում չհետապնդելով իրենից դուրս այլ նպատակ, այսինքն՝ տրված լինի հասարակայնորեն»: Հեղինակը հասարակության սոցիալ-տնտեսական ուսմունքների շերտերում նշմարում է հասարակական առաջընթացի հումանիզացման վերաբերյալ գաղափարների առկայությունը: Սակայն, արդի գլոբալացվող աշխարհի պայմաններում է ստեղծվել հումանիստական փոխակերպության սկսվող գործընթացները: Ըստ էության ձևավորվել է նոր աշխարհակարգ, երբ ավանդաբար կիրառվող մակրոտնտեսական ցուցանիշները, այլևս չեն արտահայտում զարգացման

---

[1] **Վարանդյան Մ.** «Վերածնվող հայրենիքը և մեր դերը», Ժնև, 1910, էջ 306:

[2] **Մարզպանյան Հ.**, նշվ. աշխ., էջ 20:

կատարվող գործընթացների խորքային չափումները և «ինդուստրիալ հասարակության ներքին ու արտաքին զարգացման արագացումն այնքան է բարդացել և ուժեղացրել բոլոր գործընթացների փոխկախվածությունն ու փոխկապակցությունը, որ հասարակական կյանքի ցանկացած ոլորտում ցանկացած լուրջ հիմնախնդրի մեկուսի լուծումը գրեթե դարձել է անհնար»[1]: Այս պայմաններում նկատելի է դարձել տնտեսագիտության տեսության սահմանափակությունը, նրա ներփակվածությունն առանձին հարցերի մեջ: Մինչդեռ, ինչպես նկատում է Գ.Մալախշիան, տնտեսությունում կատարվող գործընթացների իսկական, համակողմանի և խորը ճանաչողության համար, անհրաժեշտ են նրանում ներառել ընդհանուր փիլիսոփայական, սոցիոլոգիական, էթիկականն կատեգորիաներ, որոնք հնարավորություն կտան տնտեսությունը ներկայացնելու՝ բարու և չարի, արդարության և անարդարության, սիրո և ատելության, ճշմարտության և ստի, գեղեցկության և այլանդակության, ազատության և կախվածության և մարդկային կյանքի ողնաշարը կազմող հիմնարար արժեքների և հակարժեքների հարաբերություններում[2]: Դրանից է կախված հասարակական կյանքի առաջընթացը և դեգրադացիան: Ի վերջո՝ տնտեսության՝ մարդկանց բարեկեցության ապահովման իր կոչման ու ֆունկցիաների մեջ, արտահայտվում է կյանքի, թվում է վերը նշված շարժումներում հումանիզացիայի և ապահումանիզացիայի միտումները, որն ուղեկցել է մարդկության ամբողջ պատմությանը: Իր ամբողջ հակասականության մեջ տնտեսական զարգացման առկա նախադրյալները տանում են նրա ապագա հումանիզացիային: Հ.Մարզպանյանը դա կապում է աշխատանքի զարգացման գործընթացի հումանիստական բովանդակության հետ, արժեքի հումանիստական էության, հումանիստական զարգացման ֆոնդի, սեփականության էվոլյուցիայի և յուրացման համակարգի հումանիստական վերափոխման հետ: Սեփականության պատմական տիպերի բնութագրման և տարբերակման հիմքում դնելով հանրայնացման և յուրացման տնտեսական ձևերի հումանիստական ընդգրկումը, նա փորձում է «հստակեցնել նաև մասնավոր սեփականության պատմական տեղը, դրա հումանիստական էվոլյուցիան»: Տեսության մեջ դեռ հիմնավոր լուսաբանություն չեն ստացել «ո՞րն է սեփականության՝ որպես համընդհանուր և պատմականորեն որոշակի հարաբերության սուբստանցը, որում խտացված է արտադրական հարաբերությունների ընդհանրական էությունը, ինչ է ներկայացնում սեփականությունը որպես յուրացում և ինչ կապ կա նրա իրավագիտական և տնտեսական բովանդակության միջև, ինչպիսի միտում է դրսևորում սեփականության հանրայնացման և յուրացման համակարգերի էվոլյուցիան, արդյո՞ք երբևէ

[1] Տես նույն տեղում, էջ 67:

[2] **Малашхия Г.М.** Тенденции гуманизации и дегуманизации экономики // Отчуждение человека в перспективе глобализации мира., Выпуск 1 / Сборник философских статей. Санкт-Петербург : Издательство «Петрополис», 2001, с.157.

որպես տնտեսական հարաբերություն սեփականությունը «կվերանա, և ո՞րն է նրա հեռանկարը»[1]: Հեղինակը կատարում է դիտարկումներ, դրանց մեջ տեսնելով տնտեսական զարգացման հումանիզացման միտումները: Ինչպես ասում է Գ.Մալախշիան, գլխավորը պիտի դառնա «homo economics»-ին բնորոշ գծերի հաղթահարումը, որից հիմնականն է ձգտումը սեփական օգտին, որը համապատասխանում է Ադամ Սմիթի շուկայական տնտեսությունում անհատի պահվածքի այն բնութագրությանը, թե «Տուր ինձ այն, ինչն ինձ անհրաժեշտ է, և դու կստանաս այն, ինչը քեզ է անհրաժեշտ»[2]: Ա.Սմիթը գտնում է, թե տնտեսական զարգացումը որոշվում է իրեն իմանենտ օրենքներով և համոզված էր, որ տնտեսական օրենքների ազատության հետևանքում արդյունքը կլինի բարենպաստ: Այդ հարաբերությունների ազդեցության ներքո է ձևավորվել շուկայական տնտեսությունը ու տեսությունը, իսկ մարդիկ կրում են այդ հարաբերությունների արատները, ինչպես ասում է Ալբերտ Շվեյցերը «մարդուն փոխակերպելով հումանիզմից զուրկ արարածների»[3]: Տ.Պարսոնսը նկատում է, թե գիտատեխնիկական, կրթական և քաղաքական առաջընթացի մեջ են թաքնված քաղաքակիրթ և հումանիզացված տնտեսության ու հասարակական կյանքի ստեղծման նախադրյալները: Իսկ տնտեսականի դերի գերագնահատումը չի նպաստում նրա հումանիզացմանը: Անհրաժեշտ է անցում կատարել տնտեսականի փիլիսոփայական ընկալմանը, որը բնավ չի վերաբերում տնտեսականի նշանակությանը հասարակական կյանքում, այլ միայն հաստատում է նրա հումանիզացման մասին[4]:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՈՒՄԱՆԻԶԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՏՈՒՄԸ

Ռոբերտ Ներսեսի Սարինյան
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի
գլխավոր գիտաշխատող, բաժնի վարիչ
տ.գ.դ., պրոֆեսոր

Համառոտագիր

Արդի հասարակական հայեցության առաջ (ինչպես դա նաև XX դարասկիզբն էր) ծառացել են բազմաթիվ նոր անհայտներ, նոր պատրանքներ ու սպասումներ հասարակության կնճռոտ հարցերի լուծման ասպարեզում: Ամենատարբեր մասնագետները՝ փիլիսոփան ու տնտեսագետը, ֆիզիկոսն

---

[1] **Մարզպանյան Հ.**, նշվ. աշխ., էջ 135:

[2] Տես՝ **Մալախշիա Գ.**, նշվ. աշխ., նույնը՝ **Смит А.** Исследование о природе и причинах богатства народов, т.1, М., 1935, с. 17.

[3] **Алберт Швейцер** Культура и этика, М., 1973, с. 76.

[4] **Малашхия Г.М.**, նշվ. աշխ.:

ու հոգեբանը, կենսաբանն ու մյուսները, կատարում են դիտողություններ, փորձելով ուրվագծել ներկա և ապագա զարգացման միտումները: Դրանք և՛ լավատեսական են, և՛ հոռետեսական, մի դեպքում՝ կանխատեսում մոտալուտ կործանումը, մի այլ դեպքում՝ դրվատում գլոբալացման բերած բարեմասնությունները, հասարակության ապագա հեռապատկերը կապում նրա հումանիզացման հետ:

Բանալի բառեր՝ հասարակական առաջընթաց, հումանիզացիա, գլոբալացում, հասարակության արժեքային համակարգի կատարելագործում, տնտեսագիտության տեսություն:

ИСТОРИЧЕСКАЯ ТЕНДЕНЦИЯ ГУМАНИЗАЦИИ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ

Роберт Нерсесович Саринян
Зав. отделением, главный научный сотрудник
Института экономики им. М.Котаняна НАН РА,
д.э.н., профессор

Аннотация

Перед современной общественной мыслью (как и в начале 20-го века) встало много неизвестных, новые иллюзии и ожидания в разрешении запутанных вопросов. Специалисты разных наук: философы и экономисты, физики и психологи, биологи и другие, наблюдательно пытаются очерчивать тенденции развития настоящего и будущего. Они и оптимистичные, и пессимистичные, одни прогнозируют скорое крушение общества, другие в глобализации видят больше достоинств, прогнозируя в будущем для стран мира солидарность и гуманизм.

Ключевые слова: общественный прогресс, гуманизация, глобализация, совершенствование системы ценностей общества, экономическая теория.

HISTORICAL TENDENCY OF ECONOMIC DEVELOPMENT HUMANIZING

Robert Nerses Sarinyan
Department Head, Chief Researcher
of M. Kotanyan Institute of Economics of NAS RA,
Doctor of Economics, Professor

Abstract

Many new unknowns, new illusions and expectations have been brought to the forefront of contemporary societal thinking (as at the beginning of the 20th century) in resolving complex societal issues. Various professionals - philosopher

and economist, physicist and psychologist, biologist and others - make observations, trying to outline current and future development trends. They are both optimistic and pessimistic, in one case predicting imminent collapse, in another, praising the benefits of globalization, linking the future prospects of society with its humanization.

Keywords: social progress, humanization, globalization, improving the value systems of society, economic theory.